# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

«28» հունիսի 2023 թվականի N 122 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 N 2335-Ն 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված N 2 հավելվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ Մ.Ղազարյանի համայնքի ղեկավարին ուղղված 2023 թվականի մայիսի 29-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի հավաքական թիմերի Համահայկական ամառային ութերորդ խաղերին մասնակցելու և պատշաճ մակարդակով հանդես գալու նպատակով հատկացնել 16 000 000 (տասնվեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» և (4221) «Ներքին գործուղումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածներից օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

Կողմ (18) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Վ.Սամսոնյան

Գ.Մելիքյան

Մ.Սահակյան

Լ.Սանոյան_______________

Տ.Հովհաննիսյան_______________

Թ.Համբարձումյան_______________

Ն.Պողոսյան_______________

Գ.Պասկևիչյան_______________

Խ.Վարաժյան_______________

Հ.Ասատրյան_______________

Ս.Հովհաննիսյան_______________

Վ.Հակոբյան_______________

Կ.Սոսյան_______________

Ս.Ադամյան_______________

Գ.Մանուկյան_______________

Կ.Մալխասյան_______________

Կ.Ասատրյան_______________

Ն.Միրզոյան_______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի
«28» հունիսի 2023 թվական